



59. ԶՈՐ ԳԱՆԳԸ

Մե մարթ ու կնիկ են հըլնում: Էս մարթ ու կնիկը շատ քյասիր են հըլնում, հեչ բան չունին, մե հրեխա էլ չունին:

Շատ հեքիմների դիման, սրփերի դուռը գացին, ծոմ ու պախս պախին, էլի հրեխա չեկավ: Վերչը, որ դառցան հիցուն տարեկան, հույսները կզրվավ, թարգը տվին, տանը նստան, հիրանց դարդը լացան, Աստծուց ու աշխարհքից խրոռվ կացան:

Մե օր էս մարթը քաղաք ա էթում, որ Զատկվա բրինձ ու չիր բերա: Էթում ա, հիրա առտուրն անում ա, ուզում ա ետ գա:

Հառաչը գալում ա մե Բափել, ասում ա.—Առ էս իրեք խնձորը տա՛ր: Մեկը դո՛ւ կուտես, մեկը կըտաս, պառավտ կուտա, էս մեկն էլ մե խատ դսրաղ կառնես, կըտաս դսրաղը կուտա: Էս հարուր մանեթն էլ ա՛ռ, տար դսրաղ ա՛ռ, խեճի գնա՛:

Մարթը հիչկաց, տեսավ խնձորներն ու հարուր մանեթը հիրա ձեռի մեջն ա, հըմա Բափել չըկա. թե դրեր ես, արի տար: Դես՝ Բափել, դեն՝ Բափել, Բափել չըկա:

Գնաց մե դսրաղ առավ, խեճավ ու քչեց թրա գեղը: Ճամբեն գնալու ժամանակ խնձորներից մեկը ձերավ, տեսավ շատ լավն ա: Մտածում ա, մեկն էլ ուտա, թե չուտա: «Ուտեմ, չուտեմ, ուտեմ, չուտեմ»,—ասելով գնաց, վեռչը որոչեց մեկն էլ ուտել:

«Կուտեմ, ինչ ուզում ա, թո հըլնի»,—ասավ ու խնձորը կծեց,—պառավը որտեղի՞ց կիմանա, որ ես խնձոր եմ ձերե: Ես եմ, պառավին բան չեմ ասի»: Գնաց, գնաց, մոտցավ գեղին: Մտածում ա. «Խո՞նչ անեմ, խնձորը ե՞ս ուտեմ, ձիա՞նը տամ, թե՞ տանեմ պառվին»:

«Հ՛հ,—ասավ մարթը,—էս էլ կուտեմ, ձինն ինչ, խնձորն ինչ: Հո թաքավորի ձի չի՞, որ խնձորով ու չամիչով ձերակլենք, մե անպետք դսրաղ ա, ըստըրան չոր դարմանն էլ ա շատ, հեն ա թավլի քունջը տասը տարվա դարման ա թափած, թո հա կրծա: Հիմի էլ ձմեռ ա, կըթողեմ դրունգեքը, թո էթա հա փուչ ու տուտուկ կրծա»:

Ասավ ու խնձորն էլ ճերավ: Զինը, որ տեսավ բիձեն խնձորը ճերավ, տոճկաց, բիձին էլ, չիրն ու բրինձն էլ տփեց ջետինը ու փախավ:

Բիձեն վեր կացավ, չորերը թափ տվեց, ձունը թամբզցրեց, չիրն ու բրինձը չլկեց ու գնաց տուն: Պառավին խնձորների մասին բան չասավ: Էտենց հընցավ 4-5 ամիս: Բիձի փորն սկսեց ուռել, չիչ ա մնում ճղվի:

Ախն հընգեր ա սիրտը: Մտածում ա. «Հանգարց էրեխա չըբերե՞մ, խայտառակ հըլնեմ: Վա՛յ, Բափե՛լ, քո ոտը կոտրվեք, դու ընձի հոսստ չըգիր»:

Ինն ամիսը, ինն օրը, որ լուացավ, բիձեն ծնավ, մե չոր գանգ բերեց:

Էս գանգը տարան, որ քցեն փողոցը, բայց չոր գանգը ձեն տվեց. — Ընձի մի՛ քցեք, ես ձեր տղեն եմ, տարեք դրե՛ք դուլթին:

Գանգը տարան, չորերով փաթթին, դրին դուլթին: Էրկու ամիս հետո, բիձեն ծնեց, մե պստի ոոց քուռակ բերեց: Ուզեցին քուռակին սպանեն, որ մարթ չիմանա, խայտառակ չըլնեն, հըմա քուռակը չուֆտի քցեց, պառավն ու բիձեն վախեցան, մոտ չեկան: Էստեղ մարթը խոստացավ, որ Բափելը իրեք խնձոր ա տվե, իրեքն էլ հինքն ա ճերե:

Մարթ ու կնիկ կովան, պառավը չատ նեղացավ, որ հիրա բաժինը բիձեն ա ճերե, հըմա ինչ աներ, հելածն հելած ա: Մարթին «նաֆսատ» ասեց, «ջել» ասեց, վերչը հաշտվան:

Պառավը գնաց դուլթին բացեց, որ բան վերցնա, գանգը պառավին ասավ. — Մարե՛, սոված եմ, հա՛ց բեր ուտեմ, քուռակին էլ գարի՛ տվեք, ջրե՛ք, իրեք օրից հետո ես դուս կըգամ, էն ժամանակ հըմմեն բան ես կանեմ:

Վախեցած պառավ էկավ բիձի մոտ, բիձին ասավ, որ քուռակը տանա թավլեն, գարի տա, ջուր տա, հինքն էլ գանգի խըմար ձվածեղ արավ, տարավ դրեց հառեչը: Գանգը ձվածեղը ճերավ, քնավ: Քուռակն էլ գարին ճերավ, ջուրը խմավ, դիմմանի վրա պարկավ:

Իրեք օրից ետո գանգը ձեն տվեց. — Մարե՛, արի ընձի տա՛ր:

Պառավն էկավ, դուլթուց գանգը խանեց, տարավ բիձի մոտ: Հանգարց գանգը տրաքավ, մըչից դուս էկավ մե ոսկչա՛չուլ, ոսկեմազ տղա: Բոյով, սիրուն, արևին ասում էր. «Դու դուս մի արի, ես բոլ եմ»:

Քուռակն էլ մեծացավ, դառցավ մե խրեղեն ձի, թռնում էր երգինքը, հիչնում էր ջետինքը: Տղեն խեձավ քուռակը, խորն ու մորը «մնաք բարով» ասավ ու թռավ երգինքը, հիչավ ջետինքը, խասավ Զինումաչին, գնաց թաքավորի բաղի մեչը հիչավ, քուռակին

էլ թողեց ծաղիկների մեջը արածա: Թաքավորի ծառաները, որ էսի տեսան, էկան, որ տղին տփեն, տանեն թաքավորի մոտ:

Տղեն ասավ.—Ընձի մո'տ չըգաք, բոլորիտ կրկոտորեմ: Ես էկել եմ, որ էթամ թաքավորի մոտ: Քուռակին էլ չըխանգարեք, թո արածա, անոթի ա:

Տղին տարան թաքավորի մոտ:

Թաքավորը խարցուց, տղի այվալաղն հիմացավ, խելքը փորցեց, չատ խավնավ:

—Բն ի՞նչ ես ուզում, տղա' ջան,—ասավ թաքավորը:

—Ես էն եմ ուզում, թաքավո'րն ապրած կենա,—ասավ տղեն,—որ իրավունք տաս քո երգրից մե քանի տեսակ սերմեր տանեմ, մեր երգրում ցանենք, թո մեր ժողովուրթն էլ օքտփի, լավ ապրի, մեղք ա:

—Ի՞նչ սերմ ես ուզում, տղա', ասա' տամ:

—Ես ուզում եմ բամբակի սերմ, չայի խոտի սերմ, մեկ էլ լոբու սերմ:

Թաքավորը հրաման տվեց բերելու ամենալավ սերմերը: Լցին իրեք սիրուն ամանի մեջ ու տվին տղին: Տղեն չնորհակալութուն հայտնեց, վերցուց սերմերը, խեճավ քուռակին էկավ մեր երգիրը: Էտ օրվանից լոբին, չայը, բամբակը մեր երգրում տարածվեց, իսկ չինի ամաններն էլ տարան թանգարանը: Հիմի էս բոպեին էլ էտ ամանները դրած ա Հերևանի թանգարանը, որը չի հավատում, թո էթա տենա:

